



ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 53

ՅՈՒԼԻՍ 14/27 1912

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՃԱԲԱԹԱԹԵՐԹ

Երկրորդ տարի : 14/27 Յուլիս : Թիւ 53

ՖՅՆԹԵՆՊԼՕՏԱ 1912 ՅՈՒՆԻՍ 20

Զէմանըմըզ հայաթընդն մալամալ օլտուղը սիյասէթ, թիճարէթ, զէվզ ու սէֆա վէ սայիր պին պիր տիւրլիւ իշթիղալաթը արադընտա Գիլիսէ տախմա քէնտի թարիխինտէն պիր միւնասիպ գըմընըն խաթըրէսինի տիւնհայա արզ էյլէր: Օ կիւն՝ Մօ Եպիսկոպոսը Եէտինճի Պիոս Բաբա հազըթլէրինին հիւզ սէնէ ագտէմ Ֆօնթէնպլոյա տար իւլ էսարէթինէ միւվասէլէթինին սէնէի տէվրէյէսինի պիր այինի բուհանի իլէ վէ քէֆարէթ տուալալըյլա իճրա էյլէմիշ տիր: Պու թարիխ Գաթօլիքլէր իչուն միւ էսսիֆ պիր թարիխ տիր: Պու թարիխ միւհթէրէմ Բաբայա Պօնաբարթ թարաֆընտան վազը օլան ատալէթսիզլիք վէ մուամէլէի ճէպրիյէ վէ պախուսուա քիլիսէնին բէյիսի էքպէրի պազը քէնտինէ մէնսուպ օլանլար թարաֆընտան հէտէֆի իհանէթ վէ խըյանէթ օլմաուր սէպէպիլյլէ ղայէթ միւ էսսիֆ տիր: Մամաֆիհ պազը միւշապէհաթը միւֆիտէսի սէպէպիլլէ տէ ճէսարէթպախշ պիր թարիխ տիր:

Ահ նէ խաթըրէլէր : Պու իսթիյար Բաբա՝ թէրագգը էթմիշ օլան սըննի վէ տիւշար պուլունտըղը խասթէլիք հասէպիյլէ արթըգ պիւսպիւթիւն զալֆիէնմիշ օլտըղը հալտէ : Սալօն հապսխանէսինտէն չըգարըլա-րագ Ֆրանսայը քեամլէն տօլաշտըրըպ Ֆօնթէնպլոյա գատար կէթի-րիլմէք իւզրէ գաբալը պիր արապոյա գօնուլուր : պիր ճանի իմիշ կի-պի, մուհաֆազամը մա ժանտարմալարա թէվտի իտիլիթ : Պու գատար զանմէթ վէ մէշագգաթ իւզէրինէ պիւսպիւթիւն թագաթտան տիւշէ-իէք Վերջին թոշակ ալմաղա մէճպուր օլուր, պուլունլա պէրապէր հա-լէթի նէգտէ եէնի թէվգիֆխանէսինէ եէթիշիրսէ տէ երնէ օրատա հիշ օլմասա իգամէթինէ մախսուս պիր մահալ հազըրլանմազ :

Պու գատար թէատտի վէ բէնճիտէտէն մագաստ՝ Բաբա հազրէթլէ-րննի հիւքիւմէթ վէ մէմալիքինին զասպ օլունմասլնա զէ քէնտիսինին տէ իմբէրաթօրլն թահթը հիւքիւմրանիսինտէ սատէ պիր Ֆրանսըզ թէ-պատալ հալինէ կիրմէսինէ բաղի օլմաղա իճպար էթմէքտէն իպարէթ իտի : Տիւնեանըն բուհանի վէ ճիւմանի իսլուխաթնտա պուլունան Պօ-նարարթըն մաղբուրըղը գարչըսընտա հիշ պիր շէյ միւմքինսիլ կէ-րինմէյօրտը :

Պօնարարթ՝ եէտինճի Պիոսըն միւվասէլէթինտէն պիր գաշ հաֆթա էվվէլ : Բուսիանըն ֆէթհնէ կիթմէք իւզրէ պէօյլէք պիր օրտու պա-չընտա Ֆօնթէնպլօ սէրայընտան մլւֆարէգաթ իտուպտա Տրէզտտէ քէնտիսի էվրօբանըն իւք գրալլարը թարաֆընտան մուհաթ կէօրտիւ-յիւնտէ : արթըգ Բաբայը հիշ մէսապէսինէ ինտիրէճէք վագթը միւնա-սիպին հիւլուլ էթտիյի զաննընա կիտէրէք անը Սալօնտան Ֆօնթէնպլօ-յա նազլ էյլէմէք էմրինի օրատան վէրտի : Պու սուրէթլէ Բարիսէ եա-յա պուլունարագ վէ մէմալիքինին զասպ էտիլտիյինի վէ քէնտիսինին տէ էսիր օլտուղընը կէօրմէքլէ Գիլիսէնին բէյիսի իմբէրաթօրլն հէր շէյէ գատըրըղընըն մանօլրա վէ թէհաիտլէրի գարչընտա աճիլ պրագ-մազ իսթէնիլիյօրտը :

Բաբա քէնտի շախսընա գարչը իճրտի մէգալիմ էտէն, մէմալիքինի էլինտէն ալարագ քէնտիսինի տիւշարը էսարէթ էյլէյէն, հուգուգը մու-գատարէսէսինին զասպընտա պուլունան նաբօլէճնը աֆօրօղլայարագ ա-նըն սուի գասալարընա գարչը տիվանը Պարիյէ շիքիայէթտէ պուլուն-մուշտը : Նաբօլէճն «Բաբա քէնտի բանագրանքըյա նէ տէմէք իսթէ-յօր, աճէպա ապէրլէրիմին էլինտէն սիւահլարընը տիւշիւրէպիլմէք իտտիալընտա մը պուլունույօր» տէմիշտի Միւրա սէրասքէրէ, ճէ-նապը Հագգըն գարարը իլահիսինի ինֆազ էթմէյի Բուսիանըն գըչը՝ իւս-թիւնէ ալմըշտը : Ասքէրլէրին էլլէրինտէն սիւահլարըն տիւշմէքլէ պէրա-պէր, պիզղաթ ապէրլէր տէ տիւշտիւլէր : Սլթը եիւլ էլլի պին քիշի-լիք օ պէօյլէք օրտուտան անճագ կիրմի օթուլ պին քիշի սաղ գալ-տը : Բաբայը հապս էթմիշ օլտուղը Ֆօնթէնպլօ սէրայընա նաբօլէճն

քէմալը իսթիճալ իլէ ավտէթ էյլէտի. ֆազաթ պու տէֆա մաղլուպ օլ-մուշտը, մահճուպ օլմուշտը, ինհիզամա օլրամըշ օլան օրտուսընլն պա-գահասընտան էվվէլ քէնտի քէնտինի օրայա կիւճ աթապիլմիշտի:

Պու մաղլուպիյէթ անըն մաղրուրըղընը քէսը էտէմէմիշ իտի. եէնի ֆիւթուհաթլար իչոնն եէնի պիր օրտու թէշքիլ էթմէյէ պաշլար պաշլամազ, Բաբանըն իւզէրինէ հիւքիւմէթի բուհանիյէ իճրա էթմէք եօլունտաքի թէսավվուրաթընը թէքրար էլէ ալըր: Պու տէֆա տա չիտտէթ վէ իհանէթ Բիլիսէնին լէիսինին մուգավէմէթինի աճիզ պրազ-տըլար: Բարա քէնտի միւշավիրլէրինտէն մահրում եալլընը պաշլնա գալմըշ, սէրայ մէսնէտտարանը բուհանիլէրի թարաֆընտան իհաթէ օլունմըշ վէ հէր շէյէ գատիր միւսթէպիտին կեան վատլարընա կեան տա թէհտիտլէրինէ մարուզ պրազըլմըշ, այլարճա էն միւտհիշ վիճտան իզ-թիրապլարը իչինտէ եաշամազա մէճպուր պուլունույօրտը: Ալլահա միւ-րաճաաթ էթմէքտէն պաշգա չարէսի եօգտը: Օ իզթիրապաթ արասըն-տա մուսավէնէթ վէ թէսէլլի արամազ իչիւն Ֆօնթէնպլօ գասընտա Բաբանըն հէր կիւն պալտարազ սէօյլէտիյի ազաճտան խորան, տահա պու կիւնէ գատար մէվճուտ արը: Մամաֆիհ Բարա իլէ իմքէրաթօր արա-սընտաքի պու էլիւմ տուէլլօտա հալիւմ մահպուսըն գաիֆլիյի գալիմին ճէպը ու հիտտէթինէ դալէպէ էյլէմիշ տիր:


Ալլահ քէնտի քիլիսասընըն լէյիսի իլէ պէրապլը իտի: Պու թէճ-րիպէ Ալլահըն պիր հիքմէթի Բապպանիյէսի իլէ նէթիճէ պուլտու: Շէօյլէ քի օն ալթը ալլըզ պիր թէվգըֆտան սօնրա 1814 Յունվ. 23 տէ Նէտինճի Պիոս մահպուստան չըգարազ վէ Բօմատան գալտըրըլտըղը թարիխտէն, եէտի սէնէլիք պիր մէնֆատէն սօնրա Ֆօնթէնպլօ սէրայը-նը թէրք վէ իթալիայա թէվէճճիւհ էսիյօրտը: Պունտան պիր գաշ այ սօնրա չիմտի արթըզ սըրա Նաբօլէօնըն իտի. պինաէնալէյհ Ապրիլ 20 տէ Բիլիսէնին լէյիսի էքրէմինի խանթը թապիլիյէթինէ կէչիւրէէք գուվվէթ վէ գուտրէթինին էվճի պալապէնա եէթիչտիւմ գանն էթտիյի աշնի սէրայտան մաղլուպ վէ միւնհէզիւմ օլարազ չըգմայա մէճպուր օլ-մուշտը: Նէտինճի Պիոս Բարա սըֆաթըլլա Բօմայա ավտէթ էթտիյի սըրատա, Նաբօլէօն գրալլար մահպուսըն հալինտէ էյպա առասընա սէվզ օլունույօրտը:

Պու պէօյիւք տէրսի իպրէթին խաթըրէսի Նէտինճի Պիոսըն էսարէ-թինի վէ խէլասընը: Նաբօլէօնըն տա սուի գաստընը վէ տիւշմէսինի կէօրմիւշ վէ շահիւտ օլմուշ օլան շէհրին՝ Բիլիսէնին շէրէֆինէ դայրէթ-քէշ օլտուլը գատար տա քէնտի թէմինին խայրընա խահիշքէր պուլու-նան եպիսկոպոսը թարաֆընտան իճրա էտիլէն այինի բուհանիյի պի-հազըլն իյճապ էթտիրիր իտի:

Նաբօլէօն քէնտի գուվվէթ վէ քիպրինին խիւլեալարը արասընտա հիշ տիւշիւնէմէզ վէ իւզէրինէ հիւճում էթտիյի գուվվէթին մանէն նէ

գատար պէօյիւք պիր գուզվէթ օլտուղընը Էօլչմէմիշ իտի . տիւնհատա օրսուլարըն գուզվէթինին ֆէվզինտէ վէ ինսանըն ազլընտան իւսթիւն պիր շէյ վար օլտուղընը ծնա անլաթմագ իչիւն թալիին կէրմ ու սէրտի- նի կէօրմէսի , ֆէլէյին չէմպէրինտէն կէչմէսի մահճուպիյէթ վէ մէզէլլէթ քհասէսինտէն իչմէսի վէ մէնֆալարա կիթմէսի իյճապ էտէրտի : Կէօզ- լէրիյէ կէօրմիւշ օլսնլար մաղուպ տիւշմիւշ ճիւնսկիրին՝ Աննթէլէն գախալարը իւզէրինտէ պիր վիճտան իղթիրապըյա պիր չօգ տէֆալար Սրբազան Բարայա գարչը Ֆօնթէնպլօ քէօչկիւնտէ վալիմ վէ հիւրմէթ- սիզ պուլունմուշ օլտուղընը իգրար էթմէսինի թատիգ էտէրլէր :

Նաբօլէօնըն զիքրէ չայան շու սէօզլէրի , Բիլիսէ բէիսինին էստրէ- թի ֆէճիասընը քհամիլէն շամիլ վէ պիր պէօյիւք տէրսի իպրէթի հալի տիրլէր : «Պէնիմ էթրաֆըմ տինսիզլէր թարաֆընտան գուշատըլմըշտը , պուսլաը հէր շէյի եաքա պիլտիյիմ կիպի մէզհէպի տէ արզոււմ տաիրէ- սինէ իֆրազ էտէպիլիթ օլտուղըմա պէնի սուհուլէթլէ իգնա էթտիրլէր : Բարա պէնիմ արզուլարըմա մուվաֆագաթ էլլէմէտի , պէն ծնը հապս էթտիրտիմ , իշթէ պու պէնիմ սուգուլթըմըն պաշլըճա սէպէպլէրինտէն պիրի օլտու :» Տիւշմիւշ իմրէրաթթըն պու իգրարը , սուրէթի միւտհիշէ- տէ ծէնապլ : Հազգը տիւնհամըլլին քիւչիւք թէաթրօսընըն սաճնէսի իւզէրինտէ կէօսթէրի : Նաբօլէօն իտա նախա , պու տիւնհայը ճիտաէն պիր իտարէ էտէն վար օլտուղընը իգրարա մէճպուր օլտու : Օսուն շէ- հասէթի , պու կիւն Բիլիսէնին պաշլընա գարչը աջնի չիտտէթ բօլիթի- գասընը թազիպ իտէն հիւքիւմէթլէր իչուն պիր տէրս թէհիյէ էլլէր : Ղաթիպ իթալիա , միւթէսալլիթ Ֆրանսա Նաբօլէօնըն քէնտիրլէրէ սէօյ- լէյէն շու սէսինի իշիթմէլի տիրլէր . «Բարայա մօզունմայընըզ , եօզսա Գրիտտըն վէքիլինի հիմայէ էտէն Ալլահըն էլլինի իւզէրինիզտէ հիտս էտէրսինիզ :»



ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆՍՅԱՊԵՏԻՆ

ՊԻՌՍԻ Ժ.Թ

ՎԵՐՋԻՆ ՆԱՄԱԿՆ ԱՌ ԱՄԵՆԱՊ. ՀՈԳԵՒՈՐ ՏԷՐ

(Շարունակութիւն)

14. Սրբազան Քահանայապետը ըմբօսաներուն վերաբերմամբ իր բարձր վճիռները տալէն վերջը , իբր ճշմարիտ հայր հասարակաց և իբրև քաջ հովիւ որ իր ոչխարները կը պահպանէ և անդադար կը հսկէ անոնց

վրայ, զի մի՛ գուցէ մոլորին կամ թունաւոր կերակուր ճարակեն, իր խրատական խօսքերը կը դարձնէ կաթողիկէութեան հոգւով և սրտով և անկեղծաբար յարած մնացող իր որդւոց: Եւ 1. ամէնէն առաջ կը զգուշացնէ զանոնք որպէս զի չգայթակղին իրենց եղբարց սխալ ընթացքը, անհնազանդութիւնը և բնութաբանութիւնը տեսնելով, չերթան անոնց հետոց ետեւէն ու չմոլորին: և իր այս խրատը կը զօրացնէ Ս. Առաքելապետին Պետրոսի նոյնիմաստ խրատականովը, որ բնաւ (Բ. Պետր. Գ., 17) հին քրիստոնէից թէ՛ «Ձրդա՛յ որ յարաւան ինքն իրենց հաստատութենէն, մոլորութեան ետեւէն շեղելով»: 2. Կը խրատէ աղօթել: Աղօթքը քրիստոնէին առաջին պարտքն ու մրակ միջթարութիւնն ու զօրութիւնն է. աղօթքով ամէն բան կ'ընդունինք անկաւարձ: Եւ Ս. Հայրն կը հրահրէ իրեն հետ աղօթել, ինչպէս Քրիստոս Տէրն մեր բնաւ իր առաքելոցը. «ինձի հետ հսկեցե՛ք, աղօթեցե՛ք»: Եւ խոստացաւ ինքն ալ գալ գանուիլ երբ իր աշակերտներէն երկու կամ երեք միանան աղօթելու (Մատթ. ԺԸ, 20):— 3. Այս միացեալ աղօթքը սակայն պիտի ունենայ մասնաւոր վախճան մը, այսինքն՝ մեծաւ եռանդեամբ խնդրել Աստուծէ՛ն իրենց մոլորեալ եղբարց փրկարար ապաշխարութիւն, եւ շուտափոյթ դարձ յառողջ միջոց: Այս վախճանը ուրիշն երկու գլխաւոր բան՝ կը պարունակէ. Ա) ապաշխարութիւն. որտեղ բեկելով զլջալ գործուած յանցանքին համար, որոյ պատճառաւ մոլորելով արժանի եղաւ պատժոյ. ապաշաւ՝ ո՛րքան օգտակար անձնիւր փրկութեան, նոյնքան արդիւնաւոր ընկերին շինութեան. որոյ գլխաւոր պայմանն է թողուլ լքանել իրաց դառնալ այն ամէն խօսքէ ու գործէ որ յառաջ բերաւ այս չարիք. պայմանն է դատապարտուած, բանադրուած և հերձուածող որակուած ժողովներէն դադրել. անապաշխար է անշուշտ և կոմ կեղծապարիշտ և մարդկան ակնառու այն՝ որ կը շարունակէ մնալ այն ճամբուն մէջ զոր Ս. Քահանայապետը կը դատապարտէ. Բ) զգաստութիւն կամ ուղղութիւն. որ է՝ դառնալ առողջ մտքի, ուղղել գաղափարները, ըստ այնմ որ ցոյց տրուած է Հովուապետէն իբրեւ ուղիղ, արդար, օրինաւոր, ըստ պարտոց կաթողիկէի, ըստ կանոնաց Ս. Եկեղեցւոյ. զա՛յն միայն դաւանիլ և ընդունիլ. անո՛ր միայն յարիլ և ըստ այնմ գործել: Ա՛յս է «գերել զմիտս ի հնազանդութիւն Քրիստոսի» ինչպէս կ'ըսէ Առաքեալը: Այն ատեն միայն կ'ըլլանք որդիք Հօրն Երկնաւորի: Ահա այս ամենաբարի վախճանաւ է որ ճշմարիտ հաւատացեալք պիտի աղօթեն. Ս. Քահանայապետին հետ, իրենց մոլորեալ եղբարցը հաւատ:

15. Ի վերջոյ Սրբազան Հայրը իր գթառատ խօսքերը կը դարձնէ առ Սմենայ. Հոգեւոր Տէրը: Կ երեւակայէր նա թէ այսքան աղէտալի ժամանակամրջոյի մը մէջ, այսչափ տաժանելի իրադարձութեանց և բախտի ու դէպքերու յանկարծադէպ փոխադարձութեան մէջ, ո՛րքան ցաւած ու տրեւած ու սրտաճմլիկ հոգեբու ենթարկուած կրնայ ըլլալ հո-

գեւոր պետ մը, իր զաւակներէն տեսնելով այնքան նախատինք և խայտառակութիւն, այնչափ անվայել ու անարժան գործեր, այնչափ հետաւորութիւն, յամառութիւն, ժպրհութիւն, Եկեղեցւոյ և հոգւոց և կաթողիկէ անուան պատուոյն այնպիսի արհամարհանք, կեղտ և վնասներ, վիշտ և ցաւ ամենուրեք: Ոյր վասն և Եկեղեցւոյ Գլուխը. իր կրտսեր եղբօր կը փութայ սփոփում հայթայթել աւետարանական սկզբունքներով: Ա) ինքն, որ արդէն պաշարուած է «քորոր եկեղեցիներու հոգերով» անթիւ անհամար, զանոնք կրկնապատկուած կը զգայ՝ մտածելով այս վշտակիր կաթողիկոսին վիճակին վրայ: Ի՞նչ մեծ և անխառն միութարութիւն ա՛յսպէս կարեկից և յարչարակից ունենալ Քրիստոսի Փոխանորդը. բսել կ'ուզէ. «Պիտի հարածոյի՞ք ձեր ազգականներէն, քարեկաններէն, եղբայրներէն. ամենը զձեզ պիտի ասեն իմ անուան համար. — ինչպէս որ զիս հաղածցին. զձեզ աչ պիտի հաղածեն. աշխարհ զձեզ կ'ասէ, զի չե՛ք յաշխարհէ. մի վախճա՛ք, քանզի ես աշխարհիս յաղթեցի»: — Բ). կը սրտապնդէ զանիկա արիարար համբերելու. համբերութիւնը պարտք մ'է, և ստէպ՝ անհրաժեշտ է և անխուսափելի. բայց փրկարար է և արդիւնաւոր՝ երբ սիրայօժար, հլութեամբ և համակամութեամբ կատարուի. երբ անվեհեր արիւթեամբ և յարատեւութեամբ ի գործ դրուի: Այս համբերութեան համար է որ լսաւ Տէրը. «Ձեր համբերութեամբ պիտի շահի՞ք փրկի՞ք ձեր հոգիներ», և առաքեալն «համբերութիւնը կատարեցիք ինչպէս ես»: — Գ) կը յորդորէ սիրով ներելու. Արդէն ամէն քրիստոնէի սրբազան պարտքն է, մանաւանդ թէ սրտիչ յատկանիչն իսկ է՝ անխտիր ներել, անյիշատարութեամբ, նոյն ինքն թշնամիներու. զի Աստուածային Տէրն որ խաչահանուացը համար աղօթեց խաչին վրայ թէ՛ «Հա՛յր, թո՛ղ դոցա, զի ոչ գիտէմ զի՞նչ գործեն», պատուիրեց նաև իր հաւատացեալներուն՝ ո՛չ միայն ներել իրենց թշնամեաց, այլ և բարիք ընել անոնց և աղօթել անոնց համար. այս վսեմ առաքինութիւնը միայն քրիստոնէութիւնն ունի: Կը հետեւի ուրիմն որ նուիրապետ մը, Հայր մը և Հայրապետ մը ճշմարտապէս անյիշատար պիտի լլլայ, և իր սրտին վրայ պիտի սեղմէ ի համբոյր խաղաղութեան՝ առինքն դարձող զղջացեալ զաւակները: Ո՛վ պիտի տայ այս երջանիկ վայրկեանը գերավսեմ վերահաշտութեան և զիրկընդիտուն արտասուալից ուրախութեան, որ երկինքն անգամ ուրախութեան կայթիւններով կը թնդացրնէ: «Դարձարո՛ւք առ իս, եւ ես դարձայց առ ձեզ»: — Դ) Վերջապէս յորդոր կը կարգայ Աստուծոյ պաղատելու, իր որդւոց համար, որպէս զի դառնան ի գիտութիւն ճշմարտութեան և ի զգաստութիւն: Եւ ապա այս վշտակիր Հայրապետին դիւրացնելու համար այսքան վսեմ՝ առաքինութիւններու գործադրութիւնը, 1. անոր առջև կը դնէ Առաքելոյն այն նուիրական խօսքերը, որոնց մէջ կը բովանդակին նաև անոր սրբազան օրինակները. «Ձմեզ կը բամբասէին, կ'ըսէ, իսկ մենք այդ

բամբաստողները կ'օրհնէինք. կը հալածէին զմեզ, և մենք սիրով յանձն կ'առնուինք այս հալածանքները. մեզի դէմ հայոցանքներ կ'արձկէին, մենք ի փոխարէն կ'աղօթէինք իրենց համար»։ 2. Կը յիշեցնէ անաւց և անթառամ վարձքը զոր Տէր Յիսուս պատրաստած է յերկինս իր հաւատարմի ծառայից համար որոնք փորձութեան բովէն անցան, իրեն չարչարակից եղան, իրենց կոչման պարտքը լիովին կատարեցին և արժանացան իր գնահատման։ «Աղնիւ, ծառայ քարի եւ հաւատարիմ, մո'ւս յաւախութիւն Տեառն քո (Մատթ. ԻԵ. 21). — «Դո'ւք եք, բաւ, որ միշտ ինձի հետ եիք իմ փորձութիւններու մէջ, եւ ես նշմարապէս կը խոստանամ ձեզ, ինչպէս իմ Հայրս խոստացաւ ինձի, արհայուքիւնը (Ղուկ. ԻԲ. 28)»։

16. Հուսկ ապա Ս. Բահանայապետը իր Առաքելական Ս. Օրհնութիւնը ի բոլոր սրտէ կը շնորհէ՝ իբր գրաւական երկնային շնորհաց. զի ինչ որ ինքն օրհնէ, օրհնուած պիտի ըլլայ. ինչպէս որ անիծուած պիտի ըլլայ՝ ինչ որ ինքն անիծէ. այս օրհնութիւնը երկնքէն պիտի տեղացնէ ամէն տեսակ բարիք, եւ իր գաւակացը համար ամենամեծ ուրախութիւն է այս օրհնութիւնն առնուլ, զի այն՝ նշանակ է նաեւ Բրիտտոյի Փոխանորդին առ մեզ սնեցած բարեացակամութեան, հայրական առատաբոլի սիրոյն։ Այս Ս. Օրհնութիւնը կը շնորհուի մեր Հայրապետին, Եպիսկոպոսներուն, ընդհանուր Կղերին և ամբողջ Կաթողիկէ հաւատացեալ ժողովրդեան։

17. Տէր Աստուած Յիսուս Բրիտտոս իր Սրբազնասուրբ Փոխանորդին անկեղծ և զօրաւոր աղօթքը լսելով փրկէ մեր Հասարակութիւնը չարին այս փորձութիւններէն որ զմեզ կ'առաջնորդէ ի կորուստ անյատակ. մոլորեալ եղբայր միաքը լուսաւորէ, կամքը զօրացնէ, մեր ամենուն շնորհէ իր գերահանձար խնամատիւնը, սէրը, իր Ս. Հոգին շնորհաց, վարիչներուն՝ լրջամիտ խոհմութիւն և հպատակացս՝ անկեղծ հնազանդութիւն, ի մեծագոյն փառս իւր և ի փրկութիւն հոգւոց ամենեցուն։

(Շարունակելի)

ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԸ¹

(Շարունակութիւն)

Այնտեղ գրեթէ վերադարձի ոգիներուն.

Աղօթք կ'ընեն¹ Քաջին համար որ պարտուած

Նաւի մեծ կայմն կըտրեց 'ւ իրեն փորեց զագաղ։

¹ Տե'ս թիւ 48, էջ 312։

Բայց երբ նընջէ աւիւնն չըքեղ արարքներուն ,
 Պաշտօնեաներն երբոր կեանքի քաղաքական
 Ըլլան երկիւղն և յղիւթիւնն , կը բարձրանան
 Մեծ կոթողներ և մարմարեայ գերեզմաններ ,
 Ունայն պերճանք , ձախորդ պատկերք Տարտարոսի :
 Արդէն² գիտուն , փարթամ ամբոխն պատրկական ,
 Պարծանք և մլտք իտալացի ազնիւ թաղին ,
 Շողոքորթուած արքունեաց մէջ ունի շիրիմ
 Դեռ կենդանի . . . և սոսկ փառք են զինանքանք :
 Թող պատրաստէ մահն մեզ խաղաղ հանգրատարան
 Ուր մի անգամ ճակատագիրն դադար աւնու
 Իր վրէժներէն , մըտերմութիւնն և ժողովէ
 Ոչ գանձերու ժառանգութիւն , այլ օրինակն
 Բորբոք սիրոյ և քերթուածի ազատական :
 Վըսեմ գործոց վառեն արի ոգին Սափորք
 Հըղօրներու , ո՛վ Փինտեմօնտ . և գեղեցիկ
 Եւ սուրբ կ'ընեն ուխտաւորին՝ հողն որ զանոնք
 Կը պահպանէ : Ես երբ տեսայ շիրիմն՝ յորում
 Կը հանգչի այն³ Մեծի մարմինն , որ սանձելով
 Տիրողներու արքունի ցուպն , տերեւաթափ
 Կ'ընէ նաև անոնց դափնին , և ազգերուն
 Ցոյց կուտայ թէ ի՛նչ արցունքով և արիւնով
 Կաթկըթէ այն⁴ և անոր տապանն ո՞ր Հռովմայ մէջ
 Նոր Ողիմպոս մը բարձրացուց Երկնաւորաց .
 Ե՛ր անոր որ շատ աշխարհներու յար թաւալումն
 Եթերական տեսաւ վրանին տակ , և անշարժ
 Արփույն զանոնք փայլեցընելն համանգամայն .
 Որով նաև⁵ Անգրղիացուն՝ Հաստատութեան
 Երկնից ճամբան հարթեց ինքն նախ , ուր նա յետոյ
 Այնչափ արձակ թեւապարեց երկնաորլաց :
 Ո՛հ երանի քեզ , գոչեցի , կենսապարար
 Զեփեւներովդ , և ջինջ ու պաղ կայլակներովդ
 Զորս Ապենինն կատարներէն քեզ կը հեղու .
 Լուսինն՝ ուրախ քու այերէն , կ'ողողէ իւր
 Լուսով վըճիտ քու ըլուրներ՝ որ կայտուն ի խինդ
 Այգեկութքով . և հովիտներդ՝ ձիթենեօք շէն
 Եւ տուներով , ծաղիկներու բիւր բուրումներ
 Դրկեն յերկին : Եւ դու իսկ նախ , ո՛վ Ֆիօրէնցա
 Լըսէիր տաղն , որ ամոքեց ցասումը մեծ
 Փախըստական Կիպէլլինի , և քու նախնիքն

Սիրասընունդ՝ և շքիղ լեզուն կ'արթընցնէր :
 Կալիսպեայ այն քաղցր շուրթին՝ որ ազնիւ սէրն՝
 — Որ ե'ւ ի Հռովմ՝ ե'ւ յԵլլադա էր հոլանի, —
 Անբիծ շղարշով մը պըճնելով, յանձնէր ի ծոց
 Երկնաբնակ գիրգ Աստղկան : Բայց աւելի
 Քեզ երանի, որովհետեւ իտալական
 Չքնաղ փառքերն, իմի տաճար պահեստ ամփոփ,
 Միակ գուցէ, յորմեհետէ Աշպեան կիրճերն
 Գէշ պաշտպանուած, և մարդկային բախտի փոփոխ
 Կարողութիւնն, զէնք և ինչքեր և բազմաբն
 Եւ Հայրենիք, յուշէն ի զատ, քեզմէ ամբողջ
 Կը խրչէին : Երբ կորովի հանճարներուն
 Եւ Իտալիոյ փայլի փառքի յոյսը՝ անտի՛
 Պիտի քաղենք գուշակութիւն : Այս մարմարաց
 Յաճախ եկաւ նաեւ Վիկտորն ներշնչուելու :
 Զայրութով լի դիցն հայրենեաց, թափառէր մունչ
 Ուր Առնայ է եւս ամայի. դաշտք և երկիր
 Դիտելով յայժ անձկալից. և երբ ո'չ մի այլ
 Կենդանի դէմք մ'իբ հոգն ու վիշտը կ'ամոքէր :
 Հոս կը հանգչէր խրատակեցալն. և դէմքին վրայ
 Ունէր դալուկն մահու և յոյսն : Այս Մեծերու
 Հետ բնակի նա յաւիտեան. և ոսկորներն
 Խալտան սիրովն հայրենեաց : Բարէ՛. ահա՛
 Այն կրօնական հանգըստէն դիք մը կը խօսի.
 Կը անուցանէր նա Պարսկաց դէմ ի Մարաթին՝
 Ուր շիրիմներ նուիրեց Աթէնքն իր քաջերուն,
 Յոյն արութիւնքն և զայրոյթ : Նաւարկուն՝ որ
 Առազաստեց այն ծովէն՝ ի ստորեւ Եւրեայ
 Կը տեսնէր հոծ մըթութեան մէջ հրաշէկ կայծեր
 Փայլատակիլ՝ սողաւարտից և սուրերու
 Թունդ բախումէն. խարոյկներու մըխալն՝ հրեղէն
 Շողի. շողուն՝ երկաթեղէն զինուք, ռազմիկ
 Ուրուականներ տեսնէր փնտռել անյազ կըռիւ.
 Եւ գիշերոյ լուութեան ահեղ սարսափին մէջ

1. Բաշին. կ'ակնարկե Մարտայիս Ներսէսին, որ Ապուսերի պատերազմին մէջ (10 Օգոս.
 1798) յաղթելով ցաղիական նաւասորմիդիւն, անոր առաջնակարգ նաւի կայմը կտրեց եւ անկի
 իրեն համար դազաղ մը պատրաստել տուաւ, զոր իր ճամբորդութեան ասեւ իրեն հետ կը
 կրէր. մահուան ներկայութիւնը միշտ այժիկ առջեւ ունենալու համար. մեռաւ (21 Հոկտ. 1805)
 Թրափալիարի ճակատամարտին մէջ : 2. Գիսուն, փարքաւ եւ. հեղձութեամբ հ որ կը խօսի :
 3. Մեծի Մարմինն. այս մեծը Մահափիդիւն հ. (ծնած 1469 մեռած 1527) իբխան վեր-

Կը տարածուէր դաշաերու մէջ . հեռու , հեռու ,
Փաղանգներու դղրդիւն . հընչիւն մը փողերու ,
Վազել , սուրալ սալաքմբակ երիվարայ ,
Դոփիւ , արոփիւ գլուխներու վրայ օրհասական ,
Եւ լալք , օրհնէրդ , և Պարկայից մահառուագր :

(Շարունակելի)

ՍԱՄՍՈՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՕԾԵՄԱՆ ՀԱՆԴԵՍԸ

Յունիս 24ին վիճակած էր Սամսոնի Հայ Կաթողիկէ հասարակութեան ունենալ եկեղեցւոյ օծման հանդիսի միախմբութիւնը , միախմբութիւն մը զոր հասարակութիւններ դարերու մէջ չեն ունենար . որ բանին արժանացած էր Սամսոնի այդ փոքրիկ հասարակութիւնը այդպէս չքեղ ու կոկիկ եկեղեցի մը մէջ տեղ բերելու անձնուիրութեամբ : Իբր դիտող հիացայ սակայն այդ ժողովրդեան անձնուիրութեան հետ եկեղեցւոյ սկզբանց ներդաշնակ համընթացութեանը և հովուաւորութեանը վրայ : Ընթերցողաց ծանօթ է թէ Սամսոնցիք ինչպէս գլխացան գնահատել իրենց արժանաւոր Հովիւը և Անոր եղած սիրալիր բնագուն հաւատել իրենց արժանաւոր Հովիւը և Անոր եղած սիրալիր բնագուն հաւատել իրենց արժանաւոր Հովիւը : Այժմ ալ հպարտ կը տեսնէի զիրենք իրենց պատրաստած այդ միախմբութիւնը արժանաւոր ու պաշտօնի կողմէ Հովիւի մը նուիրել կարենալնուն մէջ : — Յունիս 23ին սոյն հասարակութիւնը միախմբութիւնը կ'ունենար տեղեկութիւն իր սիրած ու պատուած ժողովրդապետը զԳեր . Մկրտիչ Վ . Մեղմունին բարձրացած Ծայրագունութեան պատիճանին :

Յունիս 24ին Կիրակի առաւօտ կ'սկսէր հանդիսաւոր ժամերգութիւնը . երգեցողութիւնը կը կատարուէր Մարգուանու դպրաց հմուտ դասէն , որոնք հեռագրաւ հրաւիրուած էին : Հրաւիրեալ ներկայ էին

նագրով գիտ մը գրած և աշխարհավարութեան վրայ : 4. Անոր ճապանն . Միհիլանճից Պոնարօրիկն և որ ճարտարագիտ եղաւ Հոնիլ գնուող Ս . Պետրոսի Վսեմ եկեղեցւոյն : 5. Անոր որ Եւս եւ . Կալիքի Կալիքիկն և այլ (1564 — 1642) հոյակ . սասղաքաշի՝ որ իրեն ուսումներովը եւ իրիկ կասարեղացործուած հեռադիտովը ճշգրիտ գիտական սխառմի մը վերածեց Կոստանդնուպոլսի վարդապետութիւնը , այսինքն արեւի անշարժութիւնը , երկրի եւ միւս մոլորակներու հոլովումը . Սխառմ՝ որ յաւ եւս պարզունցաւ եւ ապացոյցունցաւ անցողացի Սահակ Ներսիսեան , անոր հետեւեալ շնորհիւ : 6. Անգղիացուն . Ներսիսեան : 7. Փալարսական Կիպլիլիկի . Տանէի . կ'ըսուի թէ Տանէի սկսած ըլլայ իր Առաւմաշիկ կաթողիկոսութիւնը եւ ասորիկն առաջ : 8. Վիլիսոն . Վիլիսոն Ալֆիլի (1749 . 1809) հոյակաւոր ողբերգու իսկական իսկական իսկական , զաւանթիկ , զաւանթիկ զաւանթիկ : Գրեց նաեւ հին յունական եղբորգներ :

սոյն հանդէսին Տրապիզոնի Մեծ, Ժողովրդավար Գեր. Մկրտիչ Վ. Ամպարեան, Մարգուանու Ժողովրդավար Գեր. Յովսէփ Վ. Պայթունի, Հաւաքի վանուց Մեծաւորն Սիմոն Վ. Խոյեան. Եպիսկոպոսական քարտուղար Յովսէփ Վ. Յօղունի և տեղուրց Ժողովրդավար Գեր. Մկրտիչ Ծ. Վ. Մեղմունի: Ներկայ էին նաև Մարգուանու Յիսուսեան հարց Մեծաւորն վեր. Բեռ տը Բօնթանիէ, տեղուրց Քաբուշին Մեծաւորն. Գաղղիոյ Վսեմ. Հիւպատոսը ու տեղուրց հասարակութեան աւագանիները և քաղաքէն բարձրաստիճան անձինք, որոնք եկեղեցւոյ մէջ ըստ պատուոյ և պատիճանի գրաւած էին իրենց տեղերը:

Յաւարտ Ժամերգութեան սկսաւ Օծման Ս. Արարողութիւնը դռնբացէքի ծէսով և ապա սիւն առ սիւն օծումը յարակից շարականօք և աղօթիւք անշափ խոնուած քաղմութիւնը այս դարաւոր արարողութեան կ'ընկերանար մտադրութեամբ ու աղօթիւք անշշունչ, կատարեալ և օրինակելի կարգապահութեամբ ու ճշգրտութեամբ աւարտեցաւ օծման արարողութիւնը, սոյն չքեղութեամբ ու վսեմութեամբ կատարուեցաւ Ձայնաւոր Ս. Պատարագը, և առջի օրուան փակցուած ազգին համաձայն մեծ մխիթարութիւն էր տեսնել հաղորդուող հաւատացելոց բաւական ստուար թիւը՝ նոյն առթիւ շնորհուած լիակատար ներողութիւնը վաստկելու համար:

Յաւարտ պատարագի հրաշափառով առաջնորդուեցաւ Եպիսկոպոսը յառաջնորդարան, ուր բոլոր Ժողովուրդը աջահամուրիւ և վերոյիշեալ ներկայները ջերմ բարեմաղթութիւններ բրին Արհիապ. Գերապայծառին շնորհաւորելով իր անուան տօնը որ երջանկաբար կը զուգակցէր սոյն հանդէսին, սոյն պահուն կը հասնէին շնորհաւորութեան հեռագիրներ Մարգուանէն Ս. Հաղորդութեան Տիկնանց միութեան, աղքատախնամ եղբայրութեան վարչութեան, Ակադեմական Պաշտօնեայ Վսեմ. Յովհաննէս Էֆ. Մօմճեանէ և ուրիշներէ հեազհեաէ: Կէսօրին վերոյիշեալ հրաւիրեալները ներկայ եղան ճաշին ուր բաժակաճառեր եղան Սրբազան Քահանայապետին, Ամենապատիւ Գերերջանիկ Հոգեւոր Տիրոջ և Արհ. վիճակաւորին արեւշատութեան համար:

Յետ Միջօրէի թեմական Սամսոնի վերափոխման կարգի բոյրերու կողմանէ արուեցաւ շնորհաւորութեան պարզ բայց նորը և սրտառուչ հանդէս մը յորում յուզուած վիճակաւորն խոստացաւ իր ձեռքէն եկած օժանդակութիւնը ընել, գովեց քոյրերու անխնայ աշխատանքը ու աշակերտուհեաց նախորդ օրուան քննութիւններու և սոյն օրուան հանդիսի յաջողութիւնը՝ երեկոյեան դէմ կարծես նոյն առաւօտեան քաղմութիւնը փոխն ի փոխ տուն դացած ու վերադարձած էր որոշուած էր Ս. Հաղորդութեան թափօրը Յաւարտ Ժամերգութեան Արհ. Գերապայծառը իր պերճաւան բեմաստացութեամբ յուզումնալից ճառ մը խօսեցաւ տաճարի վրայ. նիւթն էր իրեն տաճար բնական օրինաց, տաճար մով-

սխտական օրինաց, և տաճար քրիստոնէական օրինաց, աւելորդ կը համարեմ յաւելուլ սոյն քարոզին գեղեցիկ մասանց շարադրութիւնը և զարմանալի հիւսուածք:

Անմիջապէս կ'սկսէր թափօրին եռուղեռը. ամպ'ովանիի փւնակները կը բռնէին Մեծարգոյ Յովն. էֆ. Հէքիմեան, Գառնիկ էֆ. Գասպեան, Ռուբէն էֆ. Օտապաչեան և Յարութիւն Աղ. Տիլիմէթիւնեան փողոցները լի էին, պատուհանները ու պատշգամբները զիտարաններ դարձած էին. մերթ դպրաց դասուն շարականները մերթ դպրոցի աշակերտունեաց երգերը, մերթ սարկաւագաց խնկարկութիւնները մերթ փոքրիկ մանուկներու սակառիկներէն ցանցնուած ծաղիկները իրարու կը յաջորդէին. ամբողջութիւնը երկնաւոր թագաւորին փառաբանութիւնն էր որ կը վերանար և կը յանգէր իր նորակառոյց տաճարին մէջ յաւէտ կրկնուելու համար:

Ո՛հ շատ մեծ տպաւորութիւն մը թողուց վրաս սոյն օրուն ամբողջ երթեւեկութիւնը, ոգեւորութիւնը, յառաջնորդարանի յեկեղեցւոյ, այցելութեան և կից մայրապետանոցին մէջ, կատարեալ բարի խղճի խանդավառութեան օրինակը կը ներկայացնէր Սամսոն այդ օրը Պոսկուած էին իրենց այնչափ ծախքերը ու ջանքերն զո՛ն էին եկեղեցական հանդէսներուն շքեղութենէն, երգեցողութենէն, կարգապահութենէն, կրակուրոց քարոզէն, ուրախ զուարթ մանող ելլողներ առիթը կը փնտռէին, հպարտ էին տեսնելու Առն. վիճակաւորն, նոր բառ մը արտասանելու փոխանակելու, յարգանքներ տալու խնդակցելու. իրարու կը մրցէին ունեցած հանդէսներու շքեղութիւնը իրարու պատմելու յիշեցնելու քարոզին կէտերուն վրայ զմայլելու կրկնելու: Ինքնիրենս լա՛ր, ո՛րչափ երջանիկ է հասարակութիւն մը որ գիտէ անձնուէր գտնուիլ ամէն բան ընելու մէջ և ամէն բան Աստուծոյ համար ընելուն մէջ, և ի Սամսոն այդ երջանիկ հառարակութիւնը տեսայ, որ ամեն եկեղեցւոյ պէտքերը ինքը հոգալով հանդերձ, որչափ տարբեր էր այնպիսիներէ, որոնք դանկ մը չտալով հիներուն բարեպաշտութեան նուիրական առատաձեռնութիւնը իրենց յոխորտանաց պատրուակ կ'ընեն, ու այդ կալուածոց նուիրակաւորութիւնը՝ ցուցամոյլիկ անսաստուծեամբ կը փոխանակեն:

Ա. Կանապետ մը

Սամսոն 25 Յունիս 912

ԱՅԼԵՒԱՅԼՔ

ԲՈՂՈՐԱԿԱՆԱՑ ՄԷՋ ԶԱՐԹՕՆՔ: Բողոքականներուն շատերը, մանաւանդ բոս արժանւոյն ուսեալ դասակարգը, սկսած է արգէն տեսնել Կաթողիկէութեան անհամեմատ առաւելութիւնները, անկեղծները

կը խոստովանին զայն, «գոնէ՛», թէ և քաջութիւնը չունենան լուծը թօթափելու և Կաթողիկէ Մօր գիրկը վերադառնալու, մարդկային նկատմունք և շահեր մեծ դեր կը խաղան ողորինակ համոզմանց մէջ՝ վերջերս Պ. Պուշ, բողոքական Պատուելի մը Գերմանիոյ, յատուկ գրքի մը մէջ դերազանցապէս դավաբանական խօսքերով կը խօսի Կաթողիկէութեան վրայ, կատարելապէս ջատագովելով Պատարագը, Խոստովանանքը, Հաղորդութիւնը, Վարդարանը: Երանի՛ անոնց որ կը տեսնեն ու կը խոստովանին. բայց աւելի երանի՛ անոնց որ կը տեսնեն, կը լսեն Աստուծոյ ձայնը ու կը կատարեն զայն:

ԴՐԱՄԱՆԵՐՈՒ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԻՆՉ ՓՈԽԵՐԷ ԱՆՑԱՄ Է: Բարիգի Փողերանոցի Տեսչին Մ. տը Յովիլի տեղեկագրութեան համաձայն, երկրիս ընդերքներէն ցարդ հանուած ոսկի և արծաթ դրամներու արժէքը 105 միլիար ֆր. ի կը հասնի: Այժմ աշխարհի վրայ չըջած դրամներու քանակը չուրջ 45 միլիար ֆր. է, կէսը՝ ոսկի, կէսը՝ արծաթ լլլալով:

Բայց պէտք է գիտնալ որ արդի դրամական գրութիւնը միշտ նոյնը չէ եղած հնութեան մէջ ալ: Կարուած կամ կոխուած դրամներու տիւրքիմը մեր թուականէն հօթը դար առաջ միայն ծնունդ առած է: Նախնի ժողովուրդները գնումի, վաճառումի համար փոխանակութեան դրութիւնն ունէին: Դեռ այսօր իսկ. վայրենիները դրամի տեղ կը գործածեն աղի բեկորներ կամ ծովային խեցիներ մը՝ զորս համրիչի պէս չարելով քովերին կը պահեն: Հին ազգերէն շատեր ապրանքի դէմ իբր դրամ ուրիշ մէկ ապրանք մը կու տային: Յետոյ, տակաւ մեծ տաղեղէն գործիքները, զէնք, զարդեղէն սկսան իբր դրամ գործածուիլ: Հին լատին ցեղերը սովորաբար անասունները իբր դրամ կը կիրարկէին. առկէ ծնունդ առած է Բեփունիա [pecunia] բառը՝ որու արմատն է pecus = պահար. տուար որ այժմ կը նշանակէ դրամ:

Եգիպտացւոց համար դրամական գրութիւնը միշտ անծանօթ մնալով էր թէեւ, բայց անոնք կը գործածէին փոխանակութեան համար ոսկին, արծաթը, երկաթը, կապարը եւն. իրենց բնական վիճակին մէջ, և կամ մատնիի և այլ զարդու առարկաներու ձեւով. յայտնի է թէ որոշ չափու մը համաձայն զայնս կը չափու: Հրէից ու բոլոր Պաղեստինաբնակ ազգերու քով մետաղներու արժէքիչը սկիզբն էր, որ միեւնոյն տուն կը նշանակէր թէ հաշուել ու թէ կշռել:

Այս մէթոտը ունէր անշուշտ իր շատ մը անպատեհութիւնները. որով տակաւ տեղի տալով, Բրիտտոսէ հօթը դար առաջ մետաղները փոքր ու դիւրատար զանգուածներով դրամի վերածուելու դրութիւնը սկսաւ, նախ Յունաստանի մէջ. և ապա անկէ սկսաւ տարածուիլ ամէն տեղ հետզհետէ աւելի կատարելագործուելով:



Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ո Ղ Մ


Յուզիսի վերջերը Նարայիցի կաթողիկէք թուով տուելի քան 1300 հոգի իրենց տարեկան ուխտադնացութիւնը կատարեցին դէպ չուովմ Սոյն ուխտադնացութեան կը նախագահէր Նարայիի Արքեպիսկոպոսին օգնական Մոնս. Ճուլիանօ Թօմմասուօլոյ. և որու կը մասնակցէին եկեղեցական բարձրատիճան անձնաւորութիւններ, ավուակորներ, պաշտօնատարներ, արուեստաւորներ հոծ ի հոծ երկու սեռէն ևս:

Ս. Քահանայապետը շրջապատուած իր աւագանիէն ընդունեց զանոնք Գահոյից Դահլիճին մէջ ուր խոնուած էին անոնք խումբ խումբ, իրենց գլուխն ունենալով իւրաքանչիւր ընկերակցութեան յատուկ դրօշակները:

Ս. Քահանայապետը դահլիճ մտնելուն պէս աննկարագրելի խանդավառութիւն մըն էր ծայր տուաւ մէկէն, որու պերճախօս թարգմանը հանդիսացաւ Մօնս. Թօմմասուօլո՝ վստահաւորի և անվերապահ սիրոյ զգացումներով տոգորուն գեղեցիկ ճառով մը:

Ս. Քահանայապետը զգայուն շնչերով պատասխանեց սոյն ճառին, Նարայիցիներու հաւատքը վէտովի հրաբուխին մերձեցնելով, և իր հայրական օծութեամբ խրատներով դօտեպնելով ևս անոնց քրիստոնէական անկեղծ զգացումները, և շնորհելով Աւաքելական օրհնութիւնը յոտնկայս:

Յետոյ հրաժեշտ առնելով անոնցմէ, Ս. Հայրը քաշուեցաւ իր յարկաբաժինը Դքսուկան սրահէն անցնելով:



Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Է Ա Շ Խ Ա Ր Հ

Անգլիա. — Լոնտոնի Եպիսկոպոսական Եկեղեցւոյ կղերանոցի աշակերտներէն երեք հոգի կաթողիկէութիւնն ընդունեցին: Ասոնք իրենց ուսումը պիտի շարունակեն կաթողիկէ կղերանոցի մը մէջ, Իրիմացուի թէ մօտ տունէն դեռ ուրիշներ ալ պիտի գտնուին անոնց օրինակին հետեւողներ: Նկատելի կէտ մը որ կայ՝ առ է թէ, Ինչպէս սահմանափակ մտքի տէր եղողներ Անգլիոյ մէջ կուրօքէն կառչած կը մնան Անգլիկոն եկեղեցւոյ կրօնական ներշնչումէ թափուր հաւատալիքներուն, մինչ լուսամիտ անձեր շարունակ պիտաւքը կ'ըզան կաթողիկէ Ս. Եկեղեցւոյ վճիռ նաղիւրին դիմելու: — Մենք չենք կրնար մեր ապշանքը փակել երբ տակաւին մերազնայց մէջ կը տեսնենք, թէ Ինչպիսի կուրութեամբ չտեսնելով ամէնէն քաղաքակիրթ ժողովուրդին մէջ տեղի ունեցած այս շարժումները, դեռ վարկաբեկել կ'ուզեն կաթողիկէութիւնը անասկ տեսակ մակդիրներ տալով անոր:

Լուսնի ուխտագնացութիւններ ու սեղի ունեցած ֆաւօրներ. — Լուսնի ուխտագնացութիւնը իրար կը յաջորդեն շարունակ. և Անտուածածինն ալ իր ազդի ազգի հրաշքներով կը մխրթարէ խթութիւններով և ռնքոճեղի հիւանդութիւններով առաջադրող հէք մարդկութիւնը:

Տիկ. ար Պարպրի, 31 տարեկան Բարիգուհին միշտ հիւանդկախ եղած էր աղայութեանէն ի վեր ու կը տանջուէր շարունակ աղետալի նոպաներէ: 1906 և 1911ին 3 փամբակաւ փրարութեական գործողութիւններ կատարուեցան հէք կնոջ վրայ: 1911ի Հոկտեմբերին նոր մէկ նոպայ մըն ալ ունեցաւ յոյժ ահաբեկիչ, որով ստիպուեցաւ մինչև Լուսն երթալ ուխտի տաժանելի ուղեւորութեամբ մը: Հոն հասնելուն պատգարակով տարուեցաւ առաջանը 1912 Յունիս 4 ին: Առաջին լողանքին իսկ անմիջապէս բարւոքում մը զգաց. և պոնդակ վերադարձին կրցաւ քիչ մը բան ուտել: Այդ վայրկենէն սկսեալ Տիկ. ար Պարպրի բնաւ չէ ունեցած ո՛ր և է անհանգստութիւն, արտրոսին ու զօրութիւնը գտած է, մարտողութիւնը կանոնաւոր, բնաւ յաւ չի զգար, ու կը քայլէ առանց յոգնութիւն զգալու: Նոյնպէս Սր. Էօթէնի կրօշէնին 39 տարեկան բարիգուհին բժշկուեցաւ անցեալ օգոստոսի 1911 ազգային ուխտագնացութեան առեկն:

Աւազանին մէջ բրած իր երրորդ լողանքէն ետքը, յեղակարծ բարւոքում մը զգաց

հիւանդը, ստամոքսը առանց դժուարութեան կը մարսէր սովորական կերակուրները, վերըստացած է իր տխորժակն ու ուժը: Օր, կրօշէնինկ այս անգամ նոր մէկ բժշկական վկայագիրն ալ ներկայացուցած է առ օր անկէ՝ ըստ օրում իր առողջական վիճակը շատ գոհացուցիչ կը տեսնուի Լուստէ վերադառնալէն ի վեր:

Անգլիական ազգային ուխտագնացութիւնն ալ այս տարի Յունիս ին գնաց ի Լուստ Ն: Վ. Ուէսթմինսթէրի Արքեպիսկոպոսին կարգ, Պիւռնի նախագահութեամբ:

Վսեմաշուք կարգինայր իր հազար Անգլիացի ուխտաւորներով յատկապէս կ'երթար ի Լուստ՝ Անարատ Զրացեալ Կուսին նուիրագործելու Անգլիան:

* Պայտնի թեմը այս տարի ալ ի Լուստ քոյր աշխարհի առջեւ զգայացունց տեսարանը պարզեց հաւատքով զինուած մարդոց բանակի մը՝ որոնք կ'իյնան Անարատ Կոյսին առջեւ աղերսելու համար որ պահէ՝ զիրենք իրենց հաւատքին մէջ: Տասը մասնաւոր կառաւարներ յատկացուած էին Լուստ բերելու համար Պայտնի թեմին այր մարդոց 6000 է բարկացեալ ուխտաւորաց բանակը:

* Ոչ նուազ փառաւոր էր նաեւ Ռօտէլի թեմին զուտ այր մարդերէ կազմակերպուած ուխտագնացութիւնը: Ասոնք ալ թուով 4,000 էին. չքեղ էր մանաւանդ տեսարանը՝ երբ իրենցադմին հակա թափօրը կը կազմուէր Լուստի անձաւէն ու կը շրջէր վահարէն Սրբաբանին բոլորտիքը, հարիւր տասնէ աւելի ազգային գոյները կրող դրօշակներ ծածուանցնելով:

* Լիոնի թեմն ալ 6,000 ուխտաւոր տարաւ այս տարի Լուստ օրու կը նախագահէր փոխմարտար Մօն. Պօնարտէ, յանուն Ն. Վսեմ. կարգ. Գուլիէի Լիոնի թեմին ուխտաւորներու մէջ եղած հիւանդները շուրջ 720 էին: Անշուշտ ասոնցմէ շատեր ալ պիտի արժանանան բժշկուելու շնորհաց. և զորս պատշաճ առեւին պիտի փութանք ծանօթացնել Արձագանգի ընթերցողներուն:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Մ Ե Ր

* Նոր դակիլիւր կազմուեցաւ Դագի Ահմէտ Մուխար փառայի վարչապետութեամբ. — Վարչապետ, Դագի Ահմէտ Մուխար փաշա, Շէյխ Իւ Իպտա, ձեմադէտտին էֆ. Պետական խորհուրդի նախագահ՝ Քեամիլ փաշա, Դատական՝ Հիւսէյին Հիւմի փաշա, Ներքին Գործոց՝ Ֆէրիտ փաշա, (Նախորդ վարչապետ), Արտաքին՝ Նորատունկեան էֆ., Պատերազմական՝ Նազր փաշա, Երեսական՝ Զիտ փաշա, Ծովային՝ Մահմուտ Մուխար փաշա, Կրթական՝ Նաչ պաշտօնէութեան խորհրդական Սալիտ էֆ., Լիզաֆի՝ Երեսփ. Ժողով Բ. Նախագահ՝ Մէհմէտ Ֆէլզի էֆէնտի, Լանը. Շին. Տամատ Շէրիֆ բաշա և Երկրագ. և Առեւ. Բէշիտ բաշա, նախկին դեսպան Վիեննայի:

Այլականիս զրկուելիք յանձնաժողովը. — Նախարարաց խորհուրդը որոշած էր խոստատու և քննիչ յանձնաժողով մը Այլականիս զրկելու Այդ ժողովին պիտի նախագահէ Երեսկայի նախագահ Ահմէտ Մուխար փաշա և պիտի մասնակցին հետեւեալ անձնաւորուած թիւները. Երեսկուտական Սիւլէյման փաշա, Իսմայիլ Հագգը և Տանիշ պէյերը և ուրիշ մէկ քանի անձնաւորութիւններ: Կը լսենք թէ Բէշիտ Աքիֆ փաշա, որ ընկի Այլականացի է, պիտի անդամակցի այս յանձնաժողովին:

* Սինապեան էֆ. Լիբանանի կառավարիչ. — Տէրութիւնները փրջապէս հաւատներ են Սինապեան էֆ.ի անուանման իբրեւ կառավարիչ Լիբանանի երեսփ. Զրանգօ բաշա թողուցեր է իր պաշտօնը և Վարչական խորհուրդը ձեռք առեր է գործերը, մինչեւ նոր կառավարիչին ժամանումը:

* Երկու լրտեսներ ձերբակալուած. — Դամասկոսէն կը հեռագրեն թէ խաղական կառավարութեան կողմէ դէպի Սուրիա զրկուած խաղացի երկու լրտեսները Երեսողէմի մէջ ձերբակալուելով հակողութեան տակ Դամասկոս տարուեցան:

* Պուլսայի գլխաւոր ապակիները վար առնուած են անծանօթ անձերու կողմանէ:

* 60,000 ստորագրութեամբ հեռագիր մը երեսփ. ժողովը լուծելու համար. — Սկիւպի Միւնսթէտի միլիթ թերթը կը գրէ թէ Իպմիթ 60,000 ստորագրութեամբ հեռագիր մը ուղղուած է Սալիտ փաշայի և հրաւեր եղած է լուծել Երեսփ. Ժողովը:

* Նախարարական տաղնապին հետեւանքով, յետաձգուեցաւ կազմութիւնը այն

յանձնաժողովին, որ ազգ. տօնին առթիւ ներում ստանալիք անձերուն ցանկը պիտի պատ-
րաստէր: Դօմիթէն տապալած ըլլալով, Կոյս, իրատէ մը ընդհ. ներում չնորհեց:

* Իսալլացիք ամսոյս 6ին կրկին փորձեցին ուժակոծել Տարտանելը բայց՝ ինչպէս
պաշտօնապէս կը հաղորդուի, փնտով ետ դառնալ ստիպուեցան: Հետեւեալ օր ուժակո-
ծութիւնը վերսկսած են անոնք ու դարձեալ ի փախուստ դարձած: Պաշտօնական հեռագիր
մը կ'ըսէ թէ 2 թշնամի թորփելանաւեր ընկղմ. ծ են ամբողջներու բռնն կրակէն: Սքէմանի
գործակալութիւնը կը հերքէ ուժակոծումը. և մայրաքաղաքիս մէկ քանի թերթերն ալ
այլով մը կը կարծեն ու բողոքովին յերիւրուած իտալ. ուժակոծումը:

Ավանքի իտալական թերթը կ'իմացէ թէ Ապրուցցիօ դուքսը իտալիայէն յանկարծ
մեկնած է: Զրոյց կը շրջի թէ իտալական նաւատորմը պիտի գրաւէ Եգէականի մնացորդ
կղզիները:

* Բ. Դուռը Պատերազմական նախարարութեան յանձնած էր 45 տարեկաններու
զինուորագրութեան դէմ Պատրիարքարաններու կողմէ մատուցուած հաւաքական թագ-
րիրը: Սպայակոյտը, որուն քննութեան յանձնուած էր խնդիրը, մերժեց է ընդունիլ Պատ-
րիարքարաններու պահանջը, կ'ըսէ Սքանալու:

Կ'ըսուի թէ պոլական սպաներու պատուիրակութիւն մը Թէփիզ փաշայի ընդ ա-
ռաջ երթալով՝ անոր պիտի յայտնէր «Սպաներու Միութեան» պայմանները՝ երկրին վար-
չական ուղղութեան մասին: Բայց Երեսկոյտի նախորդ նախագահը իմացած ըլլալով այս
պարագան, ուղղակի կոյս. պալատ փութաց և կացութիւնը պարզեց Սուլթանին, որ ան-
ցած դարձածի մասին ընդարձակ և քիակատար տեղեկութիւններ պահանջեց: Երբ Սուլ-
թանը հարկ եղած լուսարանութիւնը ստացաւ, իսկոյն իր որոշումը հաղորդեց Դադի Ահ-
մէտ Մուխթար փաշայի, հրաւիրելով զինքը այս ծանրակշիռ պարագային ցոյց տալ իր
խոհական հայրենասիրութիւնը՝ ստանձնելով Դահլիճը կազմելու պաշտօնը:

~*~*~*~

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն Լ Ո Ւ Բ Ե Բ

Պալկալիոյ պաշտօնաւարները. — Պալկա հասած հեռագիր մը կ'ըսէ թէ Պալկա-
րիա սահմանադրի հարաւային մասին մէջ զինուորական պատրաստութիւններ կը տեսնէ:
Բազմաթիւ զինուորներ կը պահպանեն սահմանադրուի և շարունակ մեծ քանակութեամբ
զէնք և ուտեստ կը մթերուի:

* Մահափարս Մր. Լուիս Բի դէմ. — Մր. Էսքուիթ երէկ իրիկուն Տըպլին հասնելով
երբ բնակարանը տանող փողոցներուն մէկէն կ'անցնէր, կին մը կացին մը նետեց անոր
կրտսէին դէմ: Պատմութեան մը նայելով, « և է փնտս չէ պատահեր. ուրիշ զրոյցի մը նա-
յելով, նետուած կացինը ճակտէն վիրաւորեց է իսլանտացի երեսփոխան Մր. Բէնամընտը,
որ վարչապետին կ'ընկերանար:


Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Պիոս Է. Քահանայապետ	385
Ո. Քահանայապետին նախկին	388
Դերեզմաններ	391
Սամսոնի եկեղեցւոյն օծման հանդէսը	394
Այլեւայլ	396
Տեղեկագրական	398

ԱՐՏՈՆԱՏԷՐ
ՅՈՎ. Մ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԴՐԱՊԵՏ
ԳԵՈՐԳ Մ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ



«ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԴ» . Հայ Կաթողիկէ ի Պատրիարքարան պատօժական Շաբաթաբերքը, չփոխադրուած է ի Կ. Պոլիս, եւ կը սկսի հրատարակուիլ առ այժմ 16 մեծադիր էջերէ բաղկացած եւ նոյն բովանդակութեամբ. ունենալով նաեւ տեղեկութեանց բաժին մը, որ կը պարունակէ կարեւոր եւ սոյց ամէն յուրերն՝ համառօտուած. որով եւ մեծ դիւրութիւն կ'ընծայէ ընթերցողներէն անոնց մանաւանդ որոնք առհասարակ ժամանակ չունին օրաբերք կարդալու :

ԱՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Թուրքիոյ համար

Տարեկան Դիտել . արծ. 40

Վեցամսեայ » » 20

Արտասահման

Տարեկան Ֆրանկ 10

Վեցամսեայ » 5

Բաժանորդագրութիւնք կանխիկ կը վճարուին Մանսա-Քոստոյ եւ կամ մէյ մէկ դրոցոց նամակադրոշմով :

Մէկ թիւ 1 Դանեկան



Նամակ . յօդուած , եւն. կը դրկուին խմբագրութեան հասցին.
ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԴ

Պատրիարքարան Կաթողիկէ Հայոց
Բիրա Կ. Պոլիս

Katoghiché Arzakank

Patriarcat Catholique

Péra

Constantinople

- ԾԱՆՈԹ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի շաբաթ օրերը:
2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն դրկուած ո եւ է յօդուած:
3.— Ձեռագիրներ եւ չեն դարձուիր:
4.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը միայն:
5.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին: